

**ԱՌԵՎՏՐԻ ԽԹԱՆՄԱՆ ԵՎ ՈՐԱԿԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԾՐԱԳԻՐ**

**ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ**

**ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՇԵՆՔԻ  
ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ՝ ԱՐԴՑՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
ԵՐԿՈՒ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ**

(ոչ պաշտոնական թարգմանություն)

**Փաստաթուղթը մշակել է**

ԱխՈՇ ծրագրի  
Բնապահպանական և սոցիալական ոլորտի խորհրդատու՝  
Ալիսա Սավադյանը

**ԴԵԿՏԵՄԲԵՐ 2021**

ՄԱՍ Ա. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՄԱՍԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ		
Երկիր	Հայաստանի Հանրապետություն	
Ծրագիր	«Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածք» Շենքի վերակառուցման աշխատանքներ արդյունաբերական չափագիտության երկու լաբորատորիայի տեղակայման նպատակով	
Տեղանքում ծավալվող գործունեության շրջանակ	ԱԽՈՇ ծրագիրը կֆինանսավորի ՄՉԱՄ-ի հարակից տարածքների վերակառուցման աշխատանքները՝ չափագիտության և հավատարմագրման ծառայությունները արդիականացնելու և տեղական արտադրողների մրցունակությունը հզորացնելու նպատակով: Վերանորոգման աշխատանքները կիրականացվեն 11 հարկանի շենքի առաջին, երկրորդ և չորրորդ հարկերում, որտեղ տեղակայված կլինեն 7 լաբորատորիա, հարակից աշխատասենյակներ (518 մ2 մակերեսով), սարքավորումների փոխանցման սենյակ (35 մ2 մակերեսով), նիստերի/դասընթացների դահլիճ (190 մ2 մակերեսով): ՄՉԱՄ-ի գրասենյակային 743 մ2 մակերեսով տարածքի վերակառուցման աշխատանքները ներառում են որոշ աշխատասենյակների ներքին հարդարանքի վերանորոգման, հատակի նորոգման ու սվաղման, պատուհանների, դռների ու ներքին խողովակների թարմացման աշխատանքներ: Լիովին կփոխվեն ներքին հաղորդակցություններն ու ենթակառուցվածքները, էլեկտրական լարերը և ջրատարները ամբողջությամբ կփոխարինվեն: Կտեղադրվեն լուսադիտոյային լուսավորության համակարգ և փոփոխական սառեցնող հեղուկի հոսք (VRF) HVAC համակարգ: Շենքում առկա արտաքին էլեկտրականությունը, բնական գազը, ջրամատակարարումը և կոյուղաջրերի ուղղությունները կմնան անփոփոխ:	
Ինստիտուցիոնալ համաձայնագրեր (ՀԲ)	Առաջադրանքների խմբի ղեկավար՝  Երալի Բեկսուլյան Կարեն Գրիգորյան	Պաշտպանության ոլորտի մասնագետներ՝  Հմայակ Ավագյան (Բնապահպանական) Սոֆիա Վ. Գեորգիեվա (Սոցիալական)

Իրականացման միջոցառումներ (ՀՀ)	Իրականացնող գերատեսչություն՝ ՀՀ Վարչապետի գրասենյակի կազմում գործող ԾԿԳ	Աշխատանքների ղեկավար Թիվ 1 Շինվարչություն ԲԲԸ	Աշխատանքների կապալառու ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն ՓԲԸ
<b>ՏԵՂԱՄԱՍԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ</b>			
Հիմնարկի անվանումը, որի շրջակա տարածքը պետք է վերականգնվի:	«Ստանդարտների և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ		
Հաստատության հասցեն և գտնվելու վայրը, որի շրջակա տարածքը պետք է վերականգնվի:	Երևան, Կոմիտասի պողոտա, 49/4 շենք		
Ո՞ւմ է պատկանում հողը: Ո՞վ է օգտագործում հողը (պաշտոնական, ոչ ֆորմալ):	<p>Վարչական շենքի գրասենյակային տարածք և լաբորատորիաները պատկանում են ՍՉԱՄ-ին: Անշարժ գույքի ձեռքբերման իրավունքը հաստատող փաստաթուղթը հանդիսանում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N26062020-01-02-65 վկայականը՝ տրված 26.06.2020 թվականին, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարի N 627 Ա որոշման հիման վրա (Հավելված 2):</p> <p>Շենքի երեք հարկերը զբաղեցնում են ՍՉԱՄ-ի լաբորատորիաները և գրասենյակները: Վերանորոգման աշխատանքները չեն առաջացնի ֆիզիկական տեղաշարժ (տեղափոխում կամ ապաստանի կորուստ) կամ տնտեսական տեղահանում (ակտիվների կորուստ կամ ակտիվների հասանելիություն, որը հանգեցնում է եկամտի աղբյուրների կամ կենսամիջոցների կորստի): Տարածքները պետական սեփականություն են և չեն կարող օգտագործվել մասնավոր կամ շահույթ ստանալու նպատակներով:</p> <p>Հարակից հողատարածքի վրա (կադաստրային համարը՝</p>		

	<p>0100302140140) գտնվում է փողոցային առևտրի կետ, իսկ վաճառողները աշխատում են երկար տարիներ: Ակնկալվում է, որ շենքի վերանորոգման աշխատանքները որևէ կերպ չեն անդրադառնա վաճառողների վրա: Առևտրի ընթացքի վրա ազդեցության դեպքում կապալառուն և վերահսկող խորհրդատուն կտեղեկացնեն ԾԿԳ-ին՝ Վերաբնակեցման գործողությունների պլանը վերանայելու և համաձայն Ծրագրի ՎՔՇ-ի ազդակիր անձանց փոխհատուցելու նպատակով:</p>
<p>Տեղամասի շուրջ ֆիզիկական և բնական միջավայրի նկարագրություն:</p>	<p>Շենքը գտնվում է Երևանի Արաբկիր վարչական շրջանում՝ բնակելի շենքերից հեռու: Դեպի ՍՉԱՄ տանող ճանապարհն ասֆալտապատ է: Որևէ բուսական ծածկույթ (ծառ, թուփ) չի կարող խոչընդոտել շինարարական աշխատանքներին: ՍՉԱՄ-ի հարակից տարածքում բավարար տեղ կա շինարարական և մարդատար մեքենաներ կայանելու և անհրաժեշտության դեպքում՝ շինանյութի ու շինարարական թափոնների ժամանակավոր պահեստ կառուցելու համար:</p> <p>Շինարարական աշխատանքները չեն խանգարի մոտակա բնակիչների առօրյա կյանքին: Վերանորոգման աշխատանքները չեն խոչընդոտի ՍՉԱՄ-ին պատկանող և այլ հարկերում գտնվող գրասենյակների գործունեությանը: Շինանյութերը կմատակարարվեն և թափոնները կհեռացվեն բեռնատար վերելակի միջոցով:</p> <p>Ծրագրի սոցիալական և բնապահպանական ոլորտների պատասխանատու մասնագետները այցելել և նախապես զննել են են տեղամասը:</p>
<p>Տեղանքի և հեռավորության վրա գտնվող նյութի աղբյուրներ, հատկապես մասերի, ջրի, քարերի տեղակայում:</p>	<p>Անհրաժեշտ մասերն ու այլ շինանյութերը կարելի է ձեռք բերել մոտակա վաճառակետերից կամ մեծածախ առևտրի կենտրոններից:</p> <p>Շինարարության համար անհրաժեշտ ջուրը առկա է շենքում և մատակարարվում է «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից:</p>
<b>ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆԱՐԿՈՒՄՆԵՐ</b>	
<p>Ե՞րբ, որտե՞ղ տեղի կունենան/ տեղի են ունեցել հանրային քննարկումների</p>	<p>Վերջնական ԲՄԿՊ-ի անզլերեն և հայերեն տարբերակները տեղադրվել է ծրագրի ՖԲ-ին կայքում՝ ԲՄԿՊ-ի նախնական տարբերակը տեղադրվել է Ծրագրի ֆեյսբուքյան էջում (<a href="https://www.facebook.com/TPQIProject">https://www.facebook.com/TPQIProject</a>) 2021 թ</p>

գործընթացը:	<p>փետրվարի 24-ին: Փաստաթղթի վերաբերյալ հանրային խորհրդակցությունը կայացել է 2021թ. մարտի 9-ին: Նախատեսված աշխատանքների և հարցերի կամ բողոքների հասցեագրման վերաբերյալ տեղեկությունները կփակցվեն ՄՉԱՄ-ի տեղեկատվական ցուցանակի վրա, աշխատավայրում և (կամ) դրա հարակից տարածքներում:</p>
-------------	---

<b>ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ</b>	
Հավելված 1.	ՄՉԱՄ-ի հարակից տարածքների և լաբորատորիաների հատակագիծ
Հավելված 2.	Շենքի սեփականության վկայական
Հավելված 3.	Շինարարական տեղամասի լուսանկարներ
Հավելված 4.	Հանրային քննարկումների և հրավեր-հայտարարության արձանագրություններ
Հավելված 5.	Թափոնների հեռացման համաձայնագիր (կտրամադրվի վերջին ԲՍԿՊ-ում)
Հավելված 6.	Շինարարության թույլտվություն (Քաղշին կոմիտեից ներկայացված է տեղեկանք վերանորոգման աշխատանքների համար շին թույլտվության ոչ անհրաժեշտ լինելու վերաբերյալ)

**ՄԱՍ Բ. ՏԵՂԵԿԱՏՎՈՒ ԹՅՈՒՆ ԱՆՎՏԱՆԳՈՒ ԹՅԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՄԱՍԻՆ**

<b>ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ/ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՍՔՐԻՆԻՆԳ</b>			
<b>Արդյո՞ք տեղամասի գործողությունները կներառեն/կընդգրկեն այս գործողություններից որևէ մեկը:</b>	<b>Գործողություն/ ինդիք</b>	<b>Կարգավիճակ</b>	<b>Ընթացիկ գործողություններ</b>
	1. Շենքի վերականգնում	[ ] Այո [ ] Ոչ	Եթե «Այո», տե՛ս ստորև բերված <b>Ա</b> բաժինը
	2. Փոքրամասշտաբ նոր շինարարություն	[ ] Այո [ ] Ոչ	Եթե «Այո», տե՛ս ստորև բերված <b>Ա</b> բաժինը
	3. Կեղտաջրերի հեռացման անհատական համակարգ	[ ] Այո [ ] Ոչ	Եթե «Այո», տե՛ս ստորև բերված <b>Բ</b> բաժինը
	4. Պատմական շինություն(ներ) և թաղամասեր	[ ] Այո [ ] Ոչ	Եթե «Այո», տե՛ս ստորև բերված <b>Գ</b> բաժինը
	5. Հողի ձեռքբերում <sup>1</sup>	[ ] Այո [ ] Ոչ	Եթե «Այո», տե՛ս ստորև բերված <b>Դ</b> բաժինը
	6. Վտանգավոր կամ թունավոր նյութեր <sup>2</sup>	[ ] Այո [ ] Ոչ	Եթե «Այո», տե՛ս ստորև բերված <b>Ե</b> բաժինը
	7. Երթևեկության և հետիոտների անվտանգություն	[ ] Այո [ ] Ոչ	Եթե «Այո», տե՛ս ստորև բերված <b>Զ</b> բաժինը
	8. Մոցիալական ռիսկերի կառավարում	[ ] Այո [ ] Ոչ	Եթե «Այո», տե՛ս ստորև բերված <b>Է</b> բաժինը

<sup>1</sup> Հողերի ձեռքբերումը ենթադրում է մարդկանց տեղահանում, անձնական գույքի, ապրուստի միջոցների տեղափոխում դեպի ձեռքբերվող հող, որտեղ ապրում են մարդիկ, գնում կամ զբաղեցնում են, և, կամ ձեռնարկատիրական (կրպակներ) գործունեություն են ծավալում:

<sup>2</sup> Թունավոր, վտանգավոր նյութերն են ասբեստ (ամրանավորող նյութ), թունավոր ներկեր, վնասակար լուծիչներ, կապարի ներկի հեռացման միջոցներ և այլն:

ՄԱՍ Գ. ՄԵՂՄԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ՑՈՒՑԱՆԻՇ	ՄԵՂՄԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄՏՈՒԳԱԹԵՐԹ
<p>Ընդհանուր պայմաններ</p>	<p>Ծանուցում և աշխատողի անվտանգություն</p>	<p>(ա) Տեղեկացնել շինարարության և բնապահպանական տեղական տեսչություններին ու համայնքներին առաջիկա գործողությունների մասին:</p> <p>բ) Տեղեկացնել հանրությանը աշխատանքների մասին՝ զանգվածային լրատվության միջոցով և (կամ) համապատասխան ծանուցումներ փակցնել հանրությանը հասանելի վայրերում (այդ թվում աշխատանքային տեղամասում):</p> <p>գ) Ձեռք բերել շինարարության և (կամ) վերականգնման համար օրենքով անհրաժեշտ բոլոր թույլտվությունները:</p> <p>դ) Պաշտոնապես համաձայնեցնել գործատուի հետ, առ այն, որ բոլոր աշխատանքներն իրականացվելու են անվտանգ ու կազմակերպված՝ շրջակայքում գտնվող բնակիչներին պատճառվող անհարմարությունները և շրջակա միջավայրի ազդեցությունները նվազագույնի հասցնելու նպատակով:</p> <p>ե) Ապահովել աշխատողների անհատական պաշտպանիչ հանդերձանքի համապատասխանությունը միջազգային լավագույն փորձին (սաղավարտ, ըստ անհրաժեշտության՝ դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, բաճկոն և կոշիկներ):</p> <p>զ) Ապահովել ցուցանակի առկայությունը շինհրապարակում, որտեղ փակցված կլինեն աշխատանքային կանոններն ու ընթացակարգերը:</p>

<p><b>Ա. Ընդհանուր վերականգնողական և (կամ) շինարարական գործողություններ</b></p>	<p><b>Օդի որակ</b></p>	<p>ա) Առաջին հարկում քանդման աշխատանքների ժամանակ օգտագործել բեկորների հեռացման խողովակաշար:</p> <p>բ) Քանդման աշխատանքներից առաջացած բեկորները կուտակել վերահսկվող տարածքում, որտեղ ջուր կցողվի՝ փոշին նվազեցնելու նպատակով:</p> <p>գ) Կիրառել փոշեճնշման միջոցառում հորատման, պատերի քանդման աշխատանքների ժամանակ՝ պարբերաբար ջուր ցողելով և, կամ տեղադրելով փոշու պաշտպանիչ ծածկոցներ:</p> <p>դ) Փոշին նվազագույնի հասցնելու նպատակով՝ զերծ պահել շրջակայքը (մայթերը, ճանապարհները) բեկորներից:</p> <p>ե) Արգելել տեղամասում շինանյութերի, թափոնների բացօդյա այրումը:</p> <p>զ) Թույլ չտալ տեղամասում տրանսպորտային միջոցների պարապ աշխատանքը:</p>
	<p><b>Աղմուկ</b></p>	<p>(ա) Սահմանափակել շինարարության աղմուկը ցերեկային ժամերից հետո, բացառությամբ ծայրահեղ անհրաժեշտ դեպքերի: Տեղեկացնել համայնքներին աշխատանքային ժամերից դուրս նշանակված աշխատանքների մասին:</p> <p>բ) Շահագործման ընթացքում գեներատորների, օդային կոմպրեսորների և այլ շարժիչ մեխանիկական սարքավորումների շարժիչի ծածկոցները փակ պահել: Սարքավորումները տեղակայել բնակելի տարածքներից հնարավորին չափ դուրս:</p>
	<p><b>Ջրի որակ</b></p>	<p>ա) Սահմանել երոզիայի և նստվածքների կառավարման համապատասխան միջոցառումներ, օրինակ, հարդի կապոցներ և, կամ տիղմը կանխող ցանկապատեր՝ թույլ</p>



		չտալով նստվածքի շերտի տեղաշարժը և մոտակա գետերի ու առուների պղտորումը:
	Թափոնների կառավարում	<p>ա) Հատկացնել համապատասխան ուղիներ շինարարական աշխատանքներից առաջացող բոլոր թափոնների հավաքման և հեռացման համար:</p> <p>բ) Առանձնացնել հանքանյութերի կառուցման և քանդման թափոնները ընդհանուր աղբից, օրգանական, հեղուկ և քիմիական թափոններից՝ տեղում տեսակավորելով և պահելով համապատասխան արկղերում:</p> <p>գ) Հավաքել շինարարական թափոնները և խնամքով դասավորել նախանշված վայրերում:</p> <p>դ) Հնարավորության դեպքում օգտագործել և վերամշակել պահպանված և գործածելի նյութերը (բացառությամբ ապեաստի):</p>

<p>2. Երթևեկության և հետիոտնի անվտանգություն</p>	<p>Ուղղակի կամ անուղղակի վտանգներ հանրային երթևեկությանը և հետիոտներին շինարարական աշխատանքների հետևանքով</p>	<p>ա) Տեղադրել ցուցանակ, նախազգուշական նշաններ, արգելապատնեշներ և երթևեկության շրջանցիկ ցուցանակներ, աշխատանքային տեղամասը հստակ տարբերակելու, և բոլոր հնարավոր վտանգների մասին հանրությանը նախազգուշացնելու նպատակով:</p> <p>բ) Մշակել երթևեկության կառավարման համակարգ և վերապատրաստման դասընթացներ մատուցել անձնակազմի համար, հատկապես տեղամասի մուտքի և մերձակայքի երթևեկության ծանրաբեռնվածության մասին: Շինարարական երթևեկության հատվածներում ապահովել անվտանգ միջանցքներ և անցումներ հետիոտների համար:</p> <p>գ) Աշխատանքային ժամերը հարմարեցնել երթևեկության տեղական սխեմային, օրինակ՝ խուսափելով խոշոր տրանսպորտային</p>
--	---	---

		<p>գործողություններից գերզբաղված ժամերին կամ անասունի տեղափոխման ժամանակ:</p> <p>դ) Ակտիվորեն կառավարել երթևեկությունն ահրաժեշտության դեպքում՝ հասարակության անվտանգ և հարմար տեղաշարժի համար:</p> <p>ե) Վերանորոգման աշխատանքների ընթացքում ապահովել գրասենյակային հաստատությունների, խանութների և բնակավայրերի անվտանգ ու շարունակական հասանելիությունը, նշված շինությունների մերձակայքում աշխատանքների դեպքում:</p>
--	--	--

**ՄԱՍ Դ. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ**

Գործողություն	Ի՞նչ (պարամետր է հարկավոր մշտադիտարկել)	Որտե՞ղ (է հարկավոր մշտադիտարկել պարամետրը)	Ինչպե՞ս (է հարկավոր մշտադիտարկել պարամետրը)	Ե՞րբ (սահմանել հաճախականությունը կամ շարունակականությունը)	Ինչո՞ւ (է հարկավոր մշտադիտարկել պարամետրը)	Ո՞վ (է պատասխանատու մշտադիտարկման համար)
<b>ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ</b>						
Շինանյութերի ձեռքբերում	Շինանյութերը գնել գրանցված մատակարարներից	Մատակարարի գրասենյակ կամ պահեստ	Ստուգել նյութերի պիտակները և (կամ) վկայականները	Մատակարարման պայմանագրերը կնքելու ժամանակ	Ապահովել շինանյութերի հուսալիությունը և անվտանգությունը առողջության համար	ԾԿԳ Տեխնիկական հսկողության ընկերությունը
Շինարարական թափոնի գոյացում	- Ժամանակավոր տեղակայել շինարարական թափոնները այդ նպատակով հատկացված վայրում, - Ժամանակին տեղափոխել	Աշխատանքային տեղամաս  Թափոնների տեղակայման վայր	Գործունեության ստուգում	Պարբերաբար, շինարարության ընթացքում և ավարտից հետո	- Կանխել հողի, մակերևութային և ստորերկրյա ջրերի աղտոտումը: - Խուսափել շինհրապարակում վթարներից՝ շինանյութերի ցրված բեկորների և	ԾԿԳ Տեխնիկական հսկողության ընկերությունը

	թափոնները պաշտոնապես նշանակված վայր:				մանրաքարերի պատճառով: - Պահպանել շինհրապարակի և շրջակայքի գեղագիտական տեսքը:	
Շինանյութերի և թափոնների տեղափոխում	- տրանսպորտային միջոցների և մեքենաների տեխնիկական վիճակ, - բեռնատար տրանսպորտային միջոցների սահմանափակումը և պաշտպանական ժապավենով, - սահմանված ժամերի և երթուղիների պահպանում:	- Շինհրապարակ - Շինանյութերի և թափոնների փոխադրման երթուղիներ	Շինարարության օբյեկտի հարակից ճանապարհների վերահսկումը ստ շարժման ուղղության	Ընտրովի/ պատահական ստուգումներ աշխատանքային ժամերի ընթացքում	- Նվազագույնի հասցնել երթևեկի խափանումը. - Սահմանափակել աղմուկը և տեղական համայնքներում - Նվազագույնի հասցնել երթևեկի խափանումը:	ՕԿԳ Տեխնիկական հսկողության ընկերությունը
Շինարարական սարքավորումների սպասարկում	- Լվալ մեքենաները և շինտեխնիկական շինհրապարակից դուրս կամ բնական հոսքերին հարակից վայրում: - Վերալիցքավորել շինարարական տեխնիկական կամ կատարել յուղերի	Շինհրապարակ	Գործունեության ստուգում	Ընտրովի/ պատահական ստուգումներ աշխատանքային ժամերի ընթացքում	- Կանխել տեխնիկայի շահագործման հետևանքով հողի, մակերևութային և ստորերկրյա ջրերի աղտոտումը:  - Հրդեհի դեպքում՝ ժամանակին տեղայնացնել և նվազեցնել սպասվող	ՕԿԳ Տեխնիկական հսկողության ընկերությունը

	վերալցման աշխատանքներ շինհրապարակից դուրս կամ նախատեսված առանձանցված տարածքում:				վնասը:	
Աշխատողների առողջությունն ու անվտանգությունը	<p>- Աշխատանքային արտահագուստի և ԱՊՄ առկայություն:</p> <p>- Խստորեն պահպանել շինարարական սարքավորումների շահագործման և ԱՄՊ-ի օգտագործման կանոնները:</p> <p>- Անցկացնել աշխատանքի անվտանգության վերաբերյալ դասնթացներ և հրանգավորում</p> <p>- Ապահովել հրդեհաշիջման և բժշկական օգնության լրակազմի առկայությունը աշխատանքային տեղամասում:</p>	Շինհրապարակ	Վիզուալ ստուգում  Փաստաթղթերի ստուգում	Աշխատանքների ամբողջ ժամանակահատված	Նվազեցնել վնասվածք ստանալու և դժբախտ պատահարների հավանականությունը:	ԾԿԳ Տեխնիկական հսկողության ընկերությունը

<p>Պատրաստվածություն կորոնավիրուսային հիվանդության դեմ աշխատանքային տեղամասում</p>	<p>- Ձեռքերը լվանալու միջոցներ (հոսող ջուր, ձեռքի օճառի, ձեռքի ակոհոլային հիմքով մաքրող միջոցներ, չորացման սարքեր): - Բժշկական ստուգումների ընթացակարգի տեղամասի մուտքի մոտ: - Պարբերաբար ախտահանել աշխատասենյակներ, սարքավորումները, գործիքները, թափոնը:</p>	<p>Շինհրապարակ</p>	<p>Գործունեության ստուգում</p>	<p>Աշխատանքների ամբողջ ժամանակահատված</p>	<p>Նվազեցնել կորոնավիրուսային հիվանդության ավարակվելու ռիսկը աշխատանքային տեղամասում</p>	<p>ԾԿԳ Տեխնիկական հսկողության ընկերությունը</p>
<p>Երթևեկություն և ճանապարհային անվտանգություն</p>	<p>- Երթևեկության կարգավորման և նախազգուշական նշաններ, ըստ անհարժեշտության: - Շինհրապարակը պետք է սահմանազատված/ցանկապատված լինի, իսկ շինհրապարակում բոլոր շինարարական գործողությունները կատարվեն սահմանափակ</p>	<p>Շինարարական օբյեկտի շրջակա ճանապարհներ</p>	<p>Վիզուալ ստուգում</p>	<p>Աշխատանքների ամբողջ ժամանակահատված</p>	<p>Ուղևորների և (կամ) հետիոտների իրավունքը չպետք է ռտնահարվի շինարարական աշխատանքների պատճառով:</p>	<p>ԾԿԳ Տեխնիկական հսկողության ընկերությունը ճանապարհային ոստիկանություն</p>


	տարածքում: - Ոչ մի շինանյութ և թափոն չպետք է կիտել կամ տարածել շինհրապարակից դուրս:					
Տեղամասի վերականգնում	- Շենքի շրջակա հողամասում մնացորդային թափոնները մաքրված են, տարածքը վերականգնված է	Շինհրապարակ	Վիզուալ ստուգում	Աշխատանքների վերջին փուլում	Շինության գեղագիտական արժեքները չպետք է տուժեն շինարարական աշխատանքների պատճառով:	ՕԿԳ Տեխնիկական հսկողության ընկերությունը
Հանրային տեղեկատվության և բողոքների լուծում	- Աշխատանքային տարածքում տեղեկատվական ցուցանակին պետք է փակցված լինի հետևյալ տեղեկությունը. - աշխատանքների մատակարարի (կապալառուի), լիազորված անձի և աշխատանքների ֆինանսավորման ծրագրի անվանումը: - ՄՉԱՄ-ի կոնտակտային տվյալները	Շինհրապարակ	Փաստաթղթերի ստուգում	Նախքան շինարարական աշխատանքները և ընթացքում	Կապ հաստատել շինհրապարակի հարակից տարածքի բնակիչների կամ աշխատակիցների, ինչպես նաև շահագրգիռ այլ կողմերի հետ և գրանցել բողոքները:	ՕԿԳ Տեխնիկական հսկողության ընկերությունը

	տեղական համայնքների համար՝ շինարարական աշխատանքների պատճառած անհանգստության վերաբերյալ բողոքներ հղելու համար:					
<b>ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼ</b>						
Գործառնական և թափոնների կառավարում	- Հավաքել ՄՉԱՄ-ի գործունեության ընթացքում առաջացած կենցաղային թափոնները - ՄՉԱՄ-ի կենցաղային թափոնները հեռացնելու համար նախատեսված պարագաների առկայություն	ՄՉԱՄ-ի հարակից տարածք	Տեղամասի զննում	ՄՉԱՄ-ի գործունեության ամբողջ ժամանակահատվա ծ	Ապահովել սանիտարական բարենպաստ պայմաններ ՄՉԱՄ-ի աշխատակիցների և այցելուների համար	ՄՉԱՄ-ի աշխատակազմ
HVAC համակարգի շահագործում և սպասարկում	Ապահովել ամբողջ ջեռուցման և օդափոխման համակարգերի կանոնավոր սպասարկում	ՄՉԱՄ-ի հարակից տարածք	Պարբերաբար զննումներ	Ջեռուցման և օդափոխման համակարգերի սպասարկման ամբողջ ժամանակահատվա ծը	Ջեռուցման և օդափոխման համակարգերի անվտանգ և պատշաճ վիճակը	Կապալառու ՄՉԱՄ-ի աշխատակազմ




Ներքին հաղորդակցման համակարգերի սպասարկում	Էլեկտրական լարերը և ջրի/ջրահեռացման խողովակները պահպանվում են և գտնվում են աշխատանքային վիճակում	ՄՉԱՄ-ի հարակից տարածք	Պարբերաբար զննումներ	ՄՉԱՄ-ի գործունեության ամբողջ ժամանակահատված	Բացառել էլեկտրահարումների, կարճ միացումների և խողովակների արտահոսքի ռիսկերը	ՄՉԱՄ-ի աշխատակազմ
Բարեկարգված տարածք (նաև հարակից)	Շենքի արտաքին տարածքը պետք է մաքուր և բարվոք վիճակում լինի	ՄՉԱՄ-ի հարակից տարածք	Պարբերաբար զննումներ	ՄՉԱՄ-ի գործունեության ամբողջ ժամանակահատված	Ապահովել բարեկարգված տարածքների ազդեցությունը կենտրոն հաճախող շահառուների վրա	ՄՉԱՄ-ի աշխատակազմ

# Հավելված 1. ՍՉԱՄ-ի տարածքի և լարորարարի աների հատակագիծ



ՉՈՐՐՈՐԴ ԳՈՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ Ս 1:100  
ՉՈՓԱԳՐՈՒԹՅՈՒՆ



Լ.Ռ.Բ.	Լ. ԱՆՆԱԿՈՒՄ	ՎՍՏԱՏՎԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒՄ	ՎՍՏԱՏՎԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒՄ	ՎՍՏԱՏՎԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒՄ
104	3	6	6	6
ՉՈՐՐՈՐԴ ԳՈՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ Ս 1:100				ԿՐԻՍՏՈՍ ԼՈՐԵ

**Յակել ված 2 Անշարժ գույքի սեփականության վկայական**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎԿԱՅԱԿԱՆ**  
ԱՆՇԱՐժ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Սույն վկայականով հաստատվում է 26 հունիսի 2020 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

**1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)**

«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ԶԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ» ՓԲԸ

**2. ԱՆՇԱՐժ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ**

Երևան, Արաբկիր Կոմիտասի պողոտա 49/4 շենք, հ. 2

**3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՏԱԹՂԹԵՐԸ**

Երևանի քաղաքապետի 29.03.2005թ. հ. 627-Ա որոշում, Երևանի ՃՔ վարչության 18.04.2005թ. հ. 1890-2005 գլխավոր հատակագծի ՀՀ կառավարության որոշում 12.01.2012թ. թիվ 10-Ա, ՀՀ կառավարության 20.12.2012թ. հ. 1681-Ն որոշում, ճարտարապետահատակագծային առաջադրանք 19.12.2014թ. հ. 01/18-Ի-07/1-Ն-4604-872, շինարարության թույլտվություն 04.11.2014թ. հ. 01/18-61781-1167, շինարարության շահագործման փաստագրման ակտ 30.01.2015թ. հ. 01/19-15/3929-31, ճարտարապետաշինարարական նախագիծ 27.12.2014թ. հ. 01/18-05/2-72252-1202,, Փոխանցման ակտ 25/03/2020թ., Երևանի քաղաքապետի 17.06.2020թ. թիվ 1879-Ա որոշում

«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ԶԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ» ՓԲԸ  
ԱՆՇԱՐժԱԿԱՆ ՎԱՅՐՈՒՄՆԻ ԲԱԺԻՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ  
06. 11 2020 թ.

**ՎԿԱՅԱԿԱՆ N 26062020-01-0265, գաղտնաբառ՝ QAPE3ZW9TCEA**

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի  
[www.e-cadastre.am](http://www.e-cadastre.am) կայքի միջոցով

#### 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 01-003-0214-0140

Մակերեսի չափը (հա)՝ 0.1543

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

#### 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝


Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	01-003-0214-0140-001-001	Ինստիտուտ	5780.7 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
2	01-003-0214-0140-002	Հորանցք	7.2 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
3	01-003-0214-0140-003	Շվաքարան	281.4 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
4	01-003-0214-0140-001-003	Ընդհանուր տարածք	268.9 քմ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

#### Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվել է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8.2 կետի հիման վրա և նույն հոդվածի 9-րդ կետի համաձայն օտարման դեպքում ձեռք բերողը պետք է վճարի հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքը: Առկա է 82.2 քմ մակերեսով ինքնակամ շինություններ: Սեփականատիրոջ բաժնեմասը 0.1543 հա հողամասի և 268.09քմ շենքի ընդհանուր օգտագործման տարածքների նկատմամբ կազմում է 60693/78778:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Վալերիկ Սարգսյան

Ձբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր





ՎԿԱՅԱԿԱՆ N 26062020-01-0265, գաղտնաբառ՝ QAPE3ZW9TCEA

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի [www.e-cadastre.am](http://www.e-cadastre.am) կայքի միջոցով



### Քաղեղ ված 3. Լուսանկարներ





## **Յավել ված 4. ԲՍԿՊ-ի նախնական տարբերակի վերաբերյալ հանրային քննարկման արձանագրություն**

### **ՍԶԱՄ-ի հարակից տարածքների բարեկարգման Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի վերաբերյալ հանրային քննարկում**

Ս.թ. մարտի 9-ին Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին ՓԲԸ-ում տեղի ունեցավ հանրային խորհրդատվություն, որի նպատակն էր տեղեկացնել շահառուներին նախատեսված վերանորոգման աշխատանքների, դրանց ժամանակավոր ազդեցությունների և ռիսկերի մասին:

Միջոցառման վերաբերյալ հայտարարությունը նախապես տեղադրվել էր TPQI ծրագրի ՖԲ էջում՝ <https://www.facebook.com/TPQIProject> և

ՍԶԱՄ-ի պաշտոնական կայքում՝ <https://metrology.am/hy/haytararoutyouinner/naxatesvox-veranorogman-ashxatangner.html> :

Հանդիպման մասնակիցների ցանկը և համապատասխան լուսանկարները բերվում են ստորև:

1. ԱՐՄԵՆ ՈՍԿԱՆՅԱՆ՝ Տնօրենի տեղակալ
2. ԳԵՎՈՐԳ ՄԱՐՏՈՅԱՆ՝ Որակի կառավարիչ
3. ԿԱՄՈ ՄՈՎՍԻՍՅԱՆ՝ Գլխավոր չափագետ
4. ԳԱՐԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ՝ Ջերմային, ֆիզիկա-քիմիական չափումների և ստանդարտ նմուշների լաբորատորիայի վարիչ
5. ԽԱԶԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ՝ Իոնիզացիոն չափումների լաբորատորիայի վարիչ
6. ԱԼԻՍԱ ՍԱՎԱԴՅԱՆ՝ ԱԽՈԵ ծրագրի բնապահպանական և սոցիալական հարցերի խորհրդատու
7. ԼԻԱՆԱ ԲԱԼՅԱՆ՝ ԱԽՈԵ ծրագրի մոնիթորինգի և գնահատման խորհրդատու

Հանդիպումը բացեց ԱԽՈԵ Ծրագրի բնապահպանության և սոցիալական հարցերի խորհրդատու Ալիսա Մավադյանը: Նա մանրամասն ներկայացրեց ՀԲ-ի պահանջները շինարարական և վերանորոգման աշխատանքների իրականացման ժամանակ, ինչպես նաև բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի / ԲՍԿՊ-ում ներառված հնարավոր բնապահպանական և սոցիալական ռիսկերը ու մեղմացնող միջոցառումները:

Ներկայացվեցին շինարարության ժամանակ տեխնիկական հսկիչի պարտավորությունները, ներառյալ հաշվետվության մշակելու և համավարակի վերաբերյալ ստուգաթերթը լրացնելու պահանջները:

Քննարկվեցին ծրագրի հնարավոր սոցիալական ռիսկերը, որոնք կարող են ի հայտ գալ շինարարության ընթացքում:

Ա. Մավադյան. ԲՍԿՊ-ում նշված է, որ շենքի վերանորոգման ժամանակ կօգտագործվի պահուստային էլքը և բեռնատար վերելակը, որպեսզի չխափանվի շենքի այլ հարկերի և

կենտրոնական մուտքից օգտվողների անցուղարձը: Մուտքերի և բեռնատար վերելակի նկարները լրացուցիչ կցվում են:

Ա. Ոսկանյան. Շենքի մուտքերը շատ են և ցանկացած հարկի վերանորոգման համար կարելի է գտնել անհատական մոտեցում, մասնավորապես պահուստային մուտքերը, որոնք մի քանիսն են և կօգտագործվեն շենքից շինարարական աղբը դուրս բերելու համար: Բեռնատար վերելակը հնարավորություն կտա կենտրոնական մուտքից ներս մտնող մարդկանց նույնիսկ չզգալ, որ շենքում վերանորոգման աշխատանքներ են իրականացվում: Մեկ պատուհանի մոտեցումը կկիրառվի նաև ՄՉԱՄ-ում, և այդ նպատակով առաջին հարկում կիրականացվեն վերանորոգման աշխատանքները, որոնց ժամանակ շատ կարճ ժամանակահատվածում դրսում կխափանվի մեքենաների կայանելու հնարավորությունը:

Գ. Մարտոյան. Կազմակերպությունը պատրաստ է աջակցել տեխ. հսկիչներին և շինարարներին բոլոր հարցերում: Դրսում փոքր ինքնակամ շինությունների հետ կապված որևէ անհանգստություն չկա, քանի որ դրանք չեն օգտագործվում և Երևանի քաղաքապետարանը նախատեսում է քանդել դրանք:

Հնչեցին հարցեր շինարարության մեկնարկի և ավարտի հետ վերաբերյալ: Ծրագրային թիմը նշեց, որ այժմ ընթանում է մրցութային գործընթաց տեխ. հսկիչի և Կապալառու ընտրության համար:



Պահուստային մուտք դեպի շենքի առաջին հարկ	Բեռնատար վերելակ	Պահուստային մուտք դեպի շենքի նկուղային հարկ
--	------------------	---



# Հավելված 5. Թափոնների հեռացման և տեղադրման թույլ տվող ու ն

## Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ն Ծ Ա Ռ Ա Յ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ե Ր Ի Մ Ա Տ ՈՒ Ց Մ Ա Ն

ք.երևան

« 01 » հոկտեմբերի 2021 թ.

« **Ռատիկ 2 ի ն** » ՍՊԸ, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս տնօրեն Արմեն Կալոյանի որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Պավարա» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս տնօրեն Ա.Կարոյանցյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, հետագա շարադրանքում միասին անվանվելով «Կողմեր» իսկ յուրաքանչյուրը առանձին՝ «Կողմ» կնքեցին Ծառայությունների մատուցման ուղև պայմանագիրը, այսուհետ «Պայմանագիր» հետևյալի մասին:

### 1. Պայմանագրի առարկան

1.1 Կատարողը ընդունում է Պատվիրատուի արտադրական քափոնները աղբի դաշտ, իսկ Պատվիրատուն աղբի քափոնների ընդունման համար վճարում է Կատարողին Պայմանագրի 4-րդ կետում սահմանված չափով և կարգով:

### 2. Պատվիրատուի իրավունքներն ու պարտավորությունները

- 2.1 Պատվիրատուն իրավունք ունի օգտվել դաշտի տարածքում գտնվող Կատարողի սահմանափակ իրաւարակից և իրականացնել աղբ փոխադրող մեքենաների վճարում:
- 2.2 Պատվիրատուն պարտավոր է չին քափոնները փոխադրելիս պահպանել սամփուրաբախիզներին նորմերը 39 սրննադրությանը համաձայն:
- 2.3 Պատվիրատուն չին աղբը դաշտ է հասցնում ստորև նշված տրանսպորտային միջոցներով:

Մակնիշը	ԿԱԱԾ
Չափաօճան համարանիշը	07 01 914
Մակնիշը	ԿԱԱԾ
Կաշվատման համարանիշը	36 ZG 801
Մակնիշը	2 ԻԼ
Չափաօճան համարանիշը	035 CC 61
Մակնիշը	2 ԻԼ
Չափաօճան համարանիշը	34 FS 847

2.4 Պատվիրատուն Պարտավոր է մատուցված ծառայության համար Կատարողին վճարել սույն պայմանագրի 4-րդ կետում սահմանված չափով, կարգով և ժամկետում:

### 3. Կատարողի իրավունքներն ու պարտավորությունները

- 3.1 Կատարողն իրավունք ունի Պատվիրատուից պահանջելու սույն պայմանագրի 2.2 – 2.5 կետերի անշեղ կատարում:
- 3.2 Սույն պայմանագրի 2.2 – 2.5 կետերին չհետևելու դեպքում Կատարողը կարող է ներքել Պատվիրատուի շինքափոնների ընդունման հետ կապված ծառայությունների մատուցումը:

### 4. Պայմանագրի գինը, վճարման կարգն ու ժամկետները

- 4.1 Պայմանագրի գինը 1 խմ աղբի ընդունման համար կազմում է 125 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:
- 4.2 Ընդունված աղբի ծավալը հաշվարկվում է՝ շեքեմաները երթելի քանակի հիման վրա: Ընդունելով, որ ԿԱԱԾ մեքենայի մեկ նուստքի դեպքում բեռնաբախնում է 8խմ, իսկ 2ԻԼ՝ մեքենայի մեկ նուստքի դեպքում՝ 5 խմ աղբ:
- 4.3 Ցուրաքանչյուր ամսվա ավարտից հետո մինչև հաջորդ ամսվա 5-ը Կողմերի միջև կազմվում է տվյալ ամսվա ընթացքում մատուցված ծառայության վերաբերյալ համեմատական ակտ Կատարողի կողմից մատուցված ծառայությունների արժեքի նշմամբ:
- 4.4 Համեմատական ակտը ստորագրելուց հետո՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 8-ը Կատարողը Պատվիրատուին է՝ ներկայացնում համապատասխան հաշիվ-ապրանքագիր:
- 4.5 Մաւուղված ծառայության համար վճարումը կատարվում է անհամաձայն կարգով՝ սույն պայմանագրի 4.3 և 4.4 կետերում նշված կարգով կազմված փաստաթղթերի հիման վրա, մինչև ընթացիկ ամսվա հաջորդող ամսվա 10-ը՝ փոխանցում կատարելով Կատարողի բանկային հաշվեհամարին:

**Յավել ված 6.**  
**Շինարարութան թույլ տվու թյ ու ն**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ**

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

0010, ք.Երևան, Հանրապետության Իրավաբանական կառավարական տուն 3  
www.minurbag.am, E-mail: info@minurbag.am

N

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ  
պարոն Վարոս ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

2020 թվականի դեկտեմբերի 4-ի  
N 07/16314-2020 գրություն

Հարգելի պարոն Սիմոնյան

Ուսումնասիրելով «Գողթն» ՍՊ ընկերության կողմից իրականացված «Չափագիտության ազգային ինստիտուտի արդյունաբերական չափագիտության կենտրոնի համար նախատեսված շենքի վերակառուցման» նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ) հայտնում ենք, որ Նախագիծով նախատեսվող աշխատանքներն ընդգրկված են ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշման N4 հավելվածի N1 ցանկում և իրենցից ներկայացնում են ընթացիկ վերանորոգման և ներքին հարդարման աշխատանքներ, որոնք կարող են իրականացվել կառուցապատողի կողմից՝ առանց նախագծման և շինարարության թույլտվությունների և որոնց քաղաքաշինական փաստաթղթերը ենթակա չեն փորձաքննության: Հետևաբար, ներկայացված աշխատանքները կարող եք ընդունել առանց պահանջելու նախագծման և նախաշինարարական փաստաթղթերի փորձաքննության եզրակացություն:

Միաժամանակ հայտնում ենք, որ նույն որոշման N2 հավելվածի 7-րդ կետի համաձայն քաղաքաշինական փաստաթղթերը կառուցապատողի նախաձեռնությամբ կարող են ներկայացվել փորձաքննության:

Հարգանքով՝

Recoverable Signature

X

ՆՈՒՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Signed by: PETROSYAN NUNE 5714640420

Նունե ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ  
Հովիկ Դավթյան /011 621 725/,  
կատարող Հարություն Հարությունյան /011 621 759/